Արձանագրություն

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի Գնահատող հանձնաժողովի նիստի

27.03.2024թ., ժամը՝ 17:00, առցանց

Գնահատող հանձնաժողովի կազմից նիստին ներկա էին

Արփինե Սարգսյան	ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Արմեն Ղազարյան	ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ
Արթուր Պետրոսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության վիզաների բաժնի պետ
Անդրանիկ Նանագուլյան	ՀՀ ազգային անտանգության ծառայութան աշխատակից
Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
Լեոնիդ Ավետիսյան	«ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Սիրան Եգանյան	ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար (համաձայնությամբ)

Նելլի Դավթյան	ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)

Նիստին մասնակցում էին Գնահատող հանձնաժողովի անդամների 2/3-ը, քվորումն ապահովվել է:

Օրակարգային հարց 1

2022թ-ի հուլիսի 28-ի ՀՀ կառավարության «պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1183-Ն որոշման Գլուխ IX-ի (Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգին մասնակցելու իրավունքը) 50-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգին մասնակցելու նպատակով իրավաբանական անձը որակավորման հայտով գնահատող հանձնաժողովին ներկայացնում է իրավաբանական անձի գրանցված և գործող լինելու փաստը հաստատող առավելագույնը **մեկամսյա** վաղեմության քաղվածք՝ տրված տվյալ իրավաբանական անձը գրանցած պետական մարմնի կողմից: Մինչդեռ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2346-Ա որոշմամբ հաստատված հավելվածներ 3.1-ի, 3.2-ի և 3.3-ի 1.1-ի (e) ենթակետերով սահմանված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրից տեղեկանք ներկայացնելու պահանջ՝ տրված որակավորման հայտը ներկայացնելուց ոչ շուտ, քան **վաթսուն (60)** օր առաջ:

Քվեարկության դրվեց տեղեկանքի համար սահմանված վաղեմության ժամկետը ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2346-Ա որոշմամբ հաստատված հավելվածներ 3.1, 3.2, 3.3-ում 30 օր սահմանելու հարցը:

Գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները կողմ քվեարկեցին:

Որոշվեց համապատասխան փոփոխությունն իրականացնել, այն հրապարակել և ծանուցել ծրագրի հավակնորդ թեկնածուներին:

Օրակարգային հարց 2

2022թ-ի հուլիսի 28-ի ՀՀ կառավարության «պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1183-Ն որոշման 50-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգին մասնակցելու նպատակով իրավաբանական անձը որակավորման հայտով կոնսորցիումով մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգին մասնակցելու դեպքում գնահատող հանձնաժողովին ներկայացնում է կոնսորցիումի վերաբերյալ պայմանագրի բնօրինակը կամ նոտարական կարգով վավերացված պատճենը: Նշվում է, որ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են ապոստիլով վավերացված («Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիան վավերացրած երկրներից ուղարկված փաստաթղթերի դեպքում, իսկ եթե պետությունը կոնվենցիայի անդամ չէ, ապա փաստաթղթերի օրինականացումը կատարվում է հյուպատոսական ճանապարհով): Քանի որ ենթակետում նշված փաստաթղթերից մեկը մասնավոր ընկերությունների միջև կնքված բնօրինակ փաստաթուղթ է, որը ապոստիլով հաստատման ենթակա չէ, քննարկվեց դրույթը միայն փաստաթղթի պատճենի նկատմամբ կիրառելու և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2346-Ա որոշմամբ հաստատված հավելված 3.1-ի, 3.2-ի և 3.3-ի հավելված 6-ի 1.1-ի, 1.2-ի և 1.3-ի ենթակետերը նույն տրամաբանությամբ մեկնաբանելու հարցը:

Քվեարկության դրվեց ապոստիլի պահանջը միայն փաստաթղթերի պատճենների նկատմամբ կիրառելու հարցը:

Գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները կողմ քվեարկեցին:
Որոշվեց համապատասխան պարզաբանում պատրաստել, հրապարակել և ծանուցել ծրագրի հավակնորդ թեկնածուներին:

Օրակարագային հարց 3

Հավակնորդ ընկերություններից «Վերիդոս»-ը նամակով դիմել է Գնահատող հանձնաժողովին Որակավորման հարցման վերջնաժամկետը երկարաձգել 4 շաբաթով, քանի որ պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանված ժամկետում ապահովելու հետ կապված խնդիրներ կան, մասնավորապես դրանցից 2-ը ազգային օրենսդրությամբ ստացվում են 3-4 շաբաթում: Ընկերության ներկայացուցիչը նշել է, որ տվյալ փաստաթղթերը ստանալու վերաբերյալ իր դիմումը ընթացքի մեջ է: Միաժամանակ մտահոգություն է հայտնել, որ Որակավորման հարցման վերջնաժամկետը երկարաձգելիս այլ փաստաթղթեր կարող են կորցնելու վավերականությունը՝ կապված սահմանված վաղեմության ժամկետների հետ:

Որոշվեց ստեղծված իրավիճակը քննարկել ընկերության հետ՝ Որակավորման պահանջների շրջանակում հնարավոր լուծումներ փնտրելու նպատակով:

Արփինե Սարգսյան	ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)	_____ (ստորագրություն)
Արմեն Ղազարյան	ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ	_____ (ստորագրություն)
Արթուր Պետրոսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության վիզաների բաժնի պետ	_____ (ստորագրություն)
Անդրանիկ Նանագուլյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից	_____ (ստորագրություն)

Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն	(ստորագրություն)
Լեոնիդ Ավետիսյան	«ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն	(ստորագրություն)
Սիրան Եգանյան	ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար	(ստորագրություն)
Նելլի Դավթյան	ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)	(ստորագրություն)